

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Բաղաձայնական, Գիտական

51^{րդ} ՏԱՐԻ, ԹԻՒ 35

Գ. ՇՐՋԱՆ

31 ՕԳՈՍՏՈՍ 1902

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մասիս շաբաթների ամսական բաժանորդագրի են Կ. Դոնայ համար ԳՐԱԿԱՆ ԵՂ. եւ գաղափարներ համար ՅԻՍԱՆ ԴՂ., կանխիկ վճարելի: Արժանեման 12 գրանի կ'օժ 5 ռուբլի: Թղթատարական ծախքը խաղաղության վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրու-
թիւն չընդունուի: Բաժանորդագրութիւնները կը սկսին առկն ամսոյ մէկէն: Մասիս
հրատարակ կ'երէ առկն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած
են, պէտք է խնայն խնայնեն խաղաղութեան: Ժամանակ անցնելէ վերջ աշխատեալ ստա-
կութիւնները նկատողութեան չեն տրուուի:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուի:

Ձեռք կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده آغوب ماطيوسيان مطبعه سنده «ماسيس» غزته سي اداره سنده

ԽՐԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Տպարան Յ. Մատթէոսեան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Rédaction de la Revue MASSIS

Imprimerie H. Matteosian

CONSTANTINOPLE

ԱՌԵՒՏԲԱԿԱՆ ՎԱՐՔԱՐԱՆ ԲԱՆԿԱԼՔԻ

Ե. ՏԱՐԵՇԵՐՋԱՆ

ԳԻՇԵՐՈՒԿ ՏԱՐԵԿԱՆ 18 ԼԻՐԱ ՕՍՄԱՆԵԱՆ

Առեւտր. վարժարանի հինգերորդ տարեւըջանը սկսաւ : Սոյն վարժարանի նպատակն է լուրջ դաստիարակութեամբ , գործնական գիտելիքներով ուսուցանել ԼԵՋՈՒ եւ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ :

Վարժարանը ունի Մանկապարտէզի , Նախակրթարանի եւ Ուսումնարանի երեք դասընթացները :

Նախակրթարանի աշակերտաց ալ թոյլատրուած է Գերմ. եւ Անգլ. լեզուներն եւս ուսանիլ , Հայ , Օսմ. եւ Ֆրանս. լեզուաց մէջ հարկ եղած յաջողակութիւնը պահպանելով միշտ :

Նկատի առնելով հնաբնակ ծնողաց նիւթական վիճակը , արժան դասեցինք միայն 18 լիւրա տարեթոշակով գիշերօթիկ աշակերտ ընդունիլ վարժարանիս մէջ , Մնողք ալ պարտին նկատի առնուլ թէ օտար լեզու սովորելու համար օտար վարժարան յաճախելու

ըմբռնուլը սխալ է եւ վնասակար : Առեւտր. վարժարանի մէջ 11-12 տարեկան պատանիներ հինգ լեզու կը սովորին՝ գրելով , խօսելով միասին :

Աշակերտաց արձանագրութեան համար դիմել , ամէն օր , Առեւտր. վարժարան , Բանկալի , Ճէտիտիէ փողոց :

Հիմնադիր-Տնօրէն
ՅԱԿՈԲ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ , ՄԵՍ ՓՈՂՈՑ , ԹԻ 200

Կալաբա-Սերայի Լիսէին դէմ

ԳԵ. ԵՇ. ՇԲ. օրերը առաւօտեան կանուխէն մինչեւ իրիկուան ժ. 11½

ԲԵ. ԴԵ. Ուր. օրերը 6 Կն մինչեւ 11½

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ԻՒՆԻՅՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վնասք	240,000,000 ֆր.
1899ին զանձուած ապահովագին	19,500,000 »
Գրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ գրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՑ ՃԻՒՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000 ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Գրամագլուխ եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Ինքիօն»ի ապահովագրելոց կ'ընծայի հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵՆԻ ԶԷ ԳՏՆԵՆ ԱՐԵՒԵՆԼԻՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ :

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց գեղչեալ գիներով : Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները : Եահարաթիններու տարուէ տարի անմիջական վճարում , որով Ինքիօնի ապահովագրութեան ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսալաբութիւններէն , որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք , որ շահաբաժիններու բարգման (accumulation des bénéfices) ՅՈՒԹԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեանք գործող ընկերութեանց կ'ապահովադրուին :

Ընկերութեան գրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԺԱՆ
Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս , Կալաբա , Թահապուրուն խան , Օսմ. Պանֆայիս դիմացը
Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

ՄԱՍԻՆ

51րդ ՏԱՐԻ

— 31 ԾԳՈՍՏՈՍ 1902 —

ՔԻՒ 35

Ի ՈՎ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Ի Ի Ն

Յիշատակ մը. «Գրական ծիրախոս»ին առթիւ. ՄԷԲՍԷՏԷՍ: — Հանգիստ (Արձակ քերթում) Ռ. ՌԲԵՐԵԱՆ: — Դիտական պատառիկներ. Վ. Ա. Գ.: — Լիբանանի վրայ Նօրհր. Խ. ՎԵՆԵՇԵԱՆ: — Յրեմի սարի Արժանքի մէջ (Թերթոն): — Յուշանք:

ՅԻՇԱՏԱԿ ՄԸ

(«ԳՐԱԿԱՆ ԾԻՐԱԽՈՍ»ԻՆ ԱՌԹԻՒ)

Տղայութեան օրերուն՝ երբոր մեր գիւղէն բաժնուեցանք, անուշ աղջիկ մը թողուցի ինն, Բուրուլը, աղջիկ մը զոր կը սիրէի ինքի մը պէս եւ որ խենթէ մը աւելի կը սիրէր զիս: Տղա սէր՝ խենթի սէր, միեւնոյն բաներն են ինքնին, Անգիտակից յարում մը կոչու կոչմէ, փոխադարձ համակրութիւն էլ, դուրսուրանք մը որ ո՛չ մէկ գաղաղութեան վրայ հիմնուած է, եւ այս չէ՞ արդէն ուրիշ սէրը, խենթի սէրը:

Լալով բաժնուեցայ գիւղէն՝ ուր հասաւաւում էինք մօրս հիւանդութեան պատճառով, եւ ուր սքանչելի օդ մը կ'ունենայինք անու ձմեռ: Ամբողջ աղայութիւնս հոն անւում էր վերջապէս, ու մանաւանդ հոն ապրում էի Բուրուլիս հետ, գիրուկ, արփաւէտ ու շատ գեղեցիկ աղջիկ մը՝ թէեւ քիչ մը պատիկ իզմէ, բայց ինծի չափ կրակոտ, աշխարհի ու վրթիկուն:

Մնողքին, դրացի ու բարեկամ իրարու, բարենակ քաջալերած էին մեր յարումը, եւ արթոցէ նշանուածներ կը նկատէին մեզ, անհնալով որ բնաւ չէինք գատուիր իրարմէ, քանի որ տունէն բացակայած ասեմներս միայն իրարու քով կը գտնուէինք սարերու լանջերէ, ծառերու խորը, ծործորներու խորքեր, եւ կամ դաշտին կանանչութիւն:

մարդերուն վրայ, ծիծուռն ու երփներանգ անուններուն մօտիկը:

— Պաշօ՛ մը, զաւակս, — դուն ալ Բուրուլ, հայտէ նայինք, — ու երկուքս մէկ իրարու գիրկ կու տային, դուրսելով, հրահրելով զմեզ, պզտիկ աղաք ութնէն աւարտարուն, անգիտակ աշխարհի կարգերուն, անծանօթ մարդկային կիրքերուն:

Մեր ամէնէն մեծ երջանկութիւններէն մէկն էր իրարու գիրկ պառկելը՝ երբեմն տաշիքին հոգէ ծածկելովին վրայ, երբեմն մինչեւ կէս մէջքերնիս հասնող խոտի խորձերուն մէջ, եւ կամ հունձքի առանձնոր նոր նոր կապուած որաներու կատարը: Ա՛խ այդ աղու օրերը. . . . Բերան բերնի, կուրծք կուրծքի, ոտքերնիս իրարու ապուցում ու թեւերնիս իրր բարձ մէկգմէկու գլխուն տակ, կը պառկէինք այդպէս, շատ հեղ կիսամերկ, երկու գայլի կորիւններու պէս՝ ինչպէս արդէն կը կոչէին մեզ գիւղին մէջ, Որովհետեւ երկուքս ալ շատ չար էինք ուրիշներու համար, եւ գիւղին աղաքը կը խոշամեղէնք միշտ, ամէն անգամ որ ձեռքերնիս ինչային, Գիւղը իր պողպատու ծառերը ունէր, իր ծաղկաւէտ պուրակները ունէր, եւ անոնցմէ ամէնէն ազատները մենք երկուքս՝ գրաւած էինք, ինչ որ մերն էր, երբեք չէր կրնար

ուրիշի մըն ալ ըլլալ : Եւ վա՛յ այն տղուն որ մեր սեփականութեանց չուրջը դեգերելու անմտութիւնը կ'ունենար :

Երբոր գիւղէն բաժնուեցանք , այս ամէնը հոն մնացին Բուբուլին հետ : Քիչ մը լաց , քիչ մը պոռչաւուք , եւ ամէն բան լմացաւ գիւղին ծայրը՝ քաղաք , տանող արահետին վրայ՝ ուր մեզի յուզարկ եկած էին Բուբուլ եւ իր ծնողքը : Յետոյ՝ մէկ երկու համայր ալ , վերջին համայրները , որոնց վրայ կառք ցատկեցինք ու քաղաք իջանք :

* * *

Վեց տարի մը անցած էր կարծեմ , որ մը կրկին գիւղ վերադարձանք քանի մը ամսուան համար : Բուբուլը չէի մոռցած , ինչպէս նաեւ աղայութեան բոլոր յիշատակներս՝ զորս տարիներու գլուածքը ա՛լ աւելի կ'ամբարապնդէ միշտ : Իր վերջին համայրներուն վառքը տակաւին կ'առնուէր չրթունքներս , եւ ճամբուն վրայ անդուսպ , կատաղի անհամբերութիւն մը ցոյց կու տայի , չարուհիակ սաստկելով կառապանը՝ որ կարծես զիտմամբ ձերբուն ընթացքը կը դանդաղեցնէր : Երբոր առաջին տանիքները երեւցան , չկրցայ զիմանալ , եւ կառքէն վար ցատկելով նետի մը պէս կարեցի անտառին կարճ ճամբան՝ միակ անջրպետը որ մեզ գիւղէն կը բաժնէր :

Հրաշալի օգ մը կար այն օրը , եւ գիւղին տունները՝ իրենց կարմիր գոյնով կը վառէին արեւուն առակ , խոշոր սուռակներ կարծես՝ զորս հսկայ ձեռք մը ձանձրոյթի վայրկեանի մը մէջ անփութօրէն ցանած ըլլար այդ կառնանչին գոգը : Գիւղէն իմացած էին մեր գալուստը , եւ քանի մը շա՛տ մօտիկ ընտանիքներ մինչեւ անտառին բերանը ընդառաջ եկած էին մեզի :

— Բուբուլ , անուշիկ Բուբուլս , պուռացի , առաջին կարգին վրայ իսկ տեսնելով աղայութեան ընկերուհիս , զոր տարիներու կարօտը ա՛լ աւելի կը գեղեցկացնէր աչքին :

Ու խօլ թափով մը վրան նետուեցայ , զլուստ գէպի առաջ , երկու բազուկներս բաց , գրկելու համար իր մօտեւ իրանը՝ որուն առջեւ թիւնը երկար ատենէ ի վեր չէի զգացած կուրծքիս վրայ : Ա՛յն աստիճան խելայեղած

էի , որ չտեսայ թէ Բուբուլի մայրը դէպի առաջ շարժում մը ընելով , պատուարի մը պէս կը կենայ աղջկանը առաջքը : Մէկ երկու քայլ ալ առնելէ վերջ միայն զգացի առիկա , եւ ի զուր աշխատեցայ մէկդի ամենայդ արդելքը որուն չէի սպասեր ըստ , եւ որ ա՛լ աւելի անհշարի կը դարձնէր իմ ընձանքիս առարկան :

— Բուբուլ , աղուոր Բուբուլս , կը ձայնէի իրեն , մօրը դէմ մաքառումս առաջ տանելով :

Աղջիկը ամօթահար երեւոյթով մը պառուրտած էր մօրը ետին , ու ձայն չէր հաներ : Չէի հասկնար թէ ինչո՛ւ այդպէս անշարժ կը մնար , աչուրները խոնարհեցուցած երկու ստինքներուն վրայ որոնք կիսովին դարձած էին չփակին բացուածքէն , զրգոտ փոսիկ մը ձեւացնելով կաթնանցքի ճամբուն կատարը :

— Բուբուլ , քովս , հո՛ս , կը պոռալի միշտ , խելաւած , անհանդարտ շարժումներով :

Աղջիկը լուռ կը մնար միշտ , եւ անոր տեղ մայրը՝ հերաթափ գլուխս շոյելով կը յանձնարարէր որ հանդարտ կենամ :

— Ամօթ է , զաւակս , կ'ըսէր վայրկեանը անգամ մը , ա՛լ աղայ չէք , ի՛նչ կ'ըսեն տեսնողները :

— Ամօթ է , կը կրկնէին նաեւ միւս կիները՝ որոնք հոգ մեր կառքին կը սպառէին , եւ որոնցմէ մէկ երկուքը ծաղրանքի ժպտով մը կը ցողուէին վրաս :

Ոչինչ կը հասկնայի այդ սաստիկէն : Բան մը զոր տարիներով իրենք յանձնարարած էին մեզի , եւ որուն համար երբեմն այնչափ քաջալերանք կը ստանայինք իրենցմէ , ինչպէ՞ս ամօթ կը դառնար մէկ օրէն մեզը : Քարացած դիրքով մը ու կոտրած սրտով առոր վրայ կը մտածէի , երբ մեր կառքը վերջապէս գիւղին բերանը հասաւ :

— Մայր , մայր , պուռացի իտիոյն , աչուրներս լեցուն՝ յորդ լաց մը ժայթքելու մօտ , մայր , Բուբուլը . . . թող չեն տար կօր . . .

Աղջկան մայրը մէկ երկու խօսքով պատմեց իրօրութիւնը , ինչ որ խնդուքներու առիկ տուաւ : Ակնդէտ իրենց կը նայէի ,

տակաւին յուսալից : Բիւ հոգքը , մինչդեռ
գիւղ կ'ուղղուէինք , մայրս քովը առաւ զիս
եւ իր կարգին կամացուկ մը փոփոսաց ա-
նձնս ի վար :

— Զաւակս , խելօք կեցիր , ամօթ է ,
նայէ՛ , բոլոր կրնէրն ալ վրադ կը խնդան
իր . . .

— Ամօթ է . . . բայց ինչո՞ւ . . . առաջ
անխփ կը համբուրէինք իրար . . .

— Այո՛ , բայց ան ատեն աղայ էիք , կը
հասկնամ , հիմայ երկուքդ ալ մեծցած էք
. . . քեզ նայիմ , զաւակս , զիս մի խղահ-
փեր . . . տունը կը բացատրեմ քեզի , հի-
մայ նայէ որ խելօք կենաս :

Լայով տուն դացի այն իրիկունը , սիրտս
զարայ , հոգիս տխուր , մարմինս ընկճուած ,
Բիւրը , մայրս երկարօրէն խօսեցաւ հետս :
Զաւթ Բուբուլ արդէն իսկ հարսնացու աղ-
կի մը եղած է , թէ ես ալ բաւական մեծ-
ցած կը համարուիմ , ու բացատրեց թէ ին-
չո՞ւ պէտք էինք հետեւ մնալ իրարմէ , թէ
Բիւր պէտք էինք մէկ կողմ թողուլ մեր
աշխարհեան կեանքը :

Յետոյ , բոլոր այդ պատճառաբանութիւն-
ները մտքիս մէջ տեղաւորելէ վերջ , — պատ-
ճառաբանութիւններ՝ զորս այսօր համոզիչ կը
դնենք , — յարեց .

— Երբեմն ձեր կողմէ փոխանակուած
համբոյր մը զիւզին ուրախութեան , զուար-
թութեան պատճառ կ'ըլլար . այսօր , ատանկ
բան մը պարզապէս գայթակղութեան առիթ
է պիտի դառնայ : Մինչեւ որոշ տարիք մը
պիտի չառ բան կը ներսի , բայց անկէ ան-
շիւ . . . անկարելի է զաւակս . . .

Աւելի ետքը , ըսաւ տակաւին թէ Բու-
բուլ կրնար բոլորովին անմատչելի չմնալ ինծի
ու անհետելով այն յայտի նշոյլը՝ որ պահ մը
պիտի աչուրներուս մէջ , աւելցուց .

— Միայն թէ , զաւակս , ատոր համար
չտ մը բաներ պէտք են . կարծածիդ պէս
մէկ անդամով չըլլար բնաւ : Ամուսնական
նշանակարգութիւններ կան զորս պէտք է դո-
ւանել , փոխադարձ պարտաւորութիւններ
կան զորս պէտք է կատարել . պէտք է յար-
գել նաեւ բոլոր հաստատուած սովորոյթ-
ները , ու դո՛ւն մանաւանդ պէտք է աշխա-

տիս որ ինքզինքդ արժանի դարձնես ատոր :

* * *

Տղայութեանս այս անուշ ու նոյն ատեն
ցաւազին յիշատակները միտքս կ'իյնան այս
պահուս՝ ուր «Գրական Ծիւրախտ»ի խնդիր
մը բռնած է թերթերու էջերը : Յաւը , այդ
ծիրախտը , նոր բան մը չէ , եւ արդէն իսկ
մէկէ աւելի անգամներ առիթը ունեցած ենք
անոր գործած նախճիրները երեւան հանելու ,
անոր դարմանները ցոյց տալու . միայն թէ՛
նոր կը նուիրագործուի իբր գրական հիւան-
դութիւն մը , ու կը ստանայ իր որոշ անունը ,
ինչպէս կ'ըլլայ արդէն ամէն ակտի համար :
Եւ այդ անունը նախասահմանուած կ'երեւայ
մնալու , ինչպէս էր ու եղաւ Մուշեղ վար-
դապետի «Կրօնքի հիւժարտ»ը՝ որ լեզուին
ամէնէն դործածական ասացուածքներուն
կարգը անցած է այսօր մեր գրականութեան
մէջ :

Յիշատակները թել թել կը քակուին մտ-
քիս մէջ , աղայութեան օրերս , — անո՛ւշ
օրեր , — յստակօրէն կը պատկերանան աչքիս
առջեւ , կը մտաբերեմ այն խօլ ոչըր՝ որ եր-
բեմն իր խռովքը տուած էր իմ մատաղ էու-
թեանս , ու տարօրինակ կերպով նմանութիւն
մը կը գտնեմ այդ սիրոյն եւ այն եռանդոտ
մարմաջին միջեւ որ այսօր դպրոցական ար-
դաքը , տակաւին խափ մտքերն ու չկաղ-
մուած պատանիները դէպ ի գրականութիւն
կը մղէ :

Ինչո՞ւ կը սիրէի ես . — որովհետեւ աղ-
ուոր բան էր քեզին ամէնէն անուշ աղջիկը
իրեն ընկեր ունենալ , շարունակ անոր հետ
ապրիլ , անոր մտաւ ու կարմուկ թելին
վրայ միայն գլուխը հանգչեցնել : Ինչո՞ւ գրել
կ'ուզեմ այդ աղաքը . — որովհետեւ գրագէտ,
յօգուածագիր հռչակուելու հպարտութիւնն
բուն ամէնէն անխառնովը կը փքացնէ մարդս,
որովհետեւ այդ հռչակին տիրացած մէկը մա-
տով կը ցուցուի միշտ , եւ մատով ցուցուի
ալ պղտիկ գոհացում մը չէ՛ որ կու տայ
մարդկային անախառնութեան , Պարզ եսասի-
րութեան խնդիր երկուքն ալ :

Ինչպէս կը անանուի , հիմը նոյնն է , գրե-
թէ առանց ո՛ր եւ է ցայտուն տարբերու-

Թեան : Ընտանիք մը ան՝ որուն մէջ իմ՝ Կր-
բեմնի սէրս ծիլ տուած էր , ընտանիք մը
նաեւ այս լրագրութիւնը՝ ուր նորահաս
աղաքը իրենց աւելի կամ նուազ խնդրական
տաղանդին առաջին բողոքները կը պարզեն :
Նոյնն են նաեւ այն պայմանները որոնց մէջ
ծագում առնելու կոչուած են այդ երկու
սէրերը : Ծնողքս ատեն մը ինչպէ՛ս կը քա-
ջալերէին իմ աղու սէրս , « պաշօ մըն ալ ,
աչուընեքէն , ախերէն , չրթունքներէն » ,
եւալին ըսելով , այնպէս ալ այս աղաքը , իրենց
պատանիի հասունութեան միջոցին կը մղուին
գէպի թուղթն ու գիրը : « Ա՛ն զաւակս , քեզի
աղուոր թուղթ , գեղեցիկ գրիչ , ա՛ն գրէ ,
եւ նայէ որ աղէկ գրես , նայէ՛ որ զիս պղզ-
տիկ չձգես » . — աս չէ՞ հագին իսկ այն պատ-
ռէրներուն՝ զորս մեր ծնողքները իրենց ար-
դոց կու տան այն չրջանին՝ ուր անոնց տա-
րածները գլխաւորաբար դարձողական գրասե-
ղաններու վրայ կը մաշին : Ոչ իմ ծնողքս
կրնայ մեղադրելի նկատուիլ՝ երբեմնի աղու
վիճակիս մէջ իրերասիրութեան առաքինու-
թիւնը ինծի ներշնչած ըլլալուն համար , ոչ
ալ միւս ծնողքները կրնան այսպանուիլ՝ իրենց
աղաքը գէպի թուղթն ու գրիչը մղելուն
համար : Երկու պարագաներն ալ տագորուած
են բարձր , գեղեցիկ ու չինիչ ձգտումով մը ,
զոր յետին մարդն իսկ սիրով պիտի ուզէր
գնահատել :

Եւ սակայն , այդ ամէնը մինչեւ որոշ ա-
տեն մը՝ Եթէ երբեք աղայութեան միջոցին
իրարու վարժուած չրթունքներ՝ հասուն տա-
րիքի մէջ կրկին մէկգմէկու միանալով կրնան
գայթակղութեան տեղի տալ , — անանկ ա-
տեն մը անշուշտ ուր ոչ մէկ կապ զիրենք կը
զօղէ , — նոյնչափ ու թերեւս աւելի անպա-
տեն հանգամանք մը կ'առնեն գրիչն ու գիրը՝
երբ առանց պատրաստուած , առանց արժա-
նիքի մը տիրացած ըլլալու՝ կու գան գրակա-
նութեան խառնուիլ : Մարդ կրնայ ուզածին
պէս սիրել միմեկը , ուզածին չափ թուղթ
մրտանլ՝ գրականութիւն ընելու յաւակնու-
թեամբ , բայց երբ կը փափաքի իր սէրն ու
գիրը մատչեցնել ուղղակի իր ըզձանքին ա-
ռարկաներուն՝ խնդիրը բոլորովին կը տար-
բերի . ան ատեն անհրաժեշտ է որ կապ մը

գոյութիւն ունենայ որչա՛փ սիրողին ու սիր-
ուածին , այնչափ մըն ալ գրողին ու գրակա-
նութեան մէջ . երկուքն ալ , — սիրողն ու
գրողը , — իրենց գոյութիւնը արդարացող
յատկութիւններ պէտք է ունենան . այսպէս՝
իրենց ընթացքը պարզ գայթակղութիւն մը
կը դառնայ , եւ իբր այն կը նկատուի :

* * *

Թերեւս շատեր անոնցմէ՝ որոնց ուղղուած
են այս մէկ քանի աղերսը , զիրենք յուսա-
հատեցնելու ձգտող ոգի մը տեսնեն անոնց
մէջ . Ըսեմ անմիջապէս թէ ատանկ մաս-
գրութիւն մը չունիմ բնաւ , մանաւանդ որ
միշտ հաճոյք կը գգամ՝ արժանիքի մը կըռ-
թնած նոր անունի մը գոյութիւն առնելը
տեսնելով : Զէ՞ մի որ մարդ որչա՛փ լաւ ըն-
կերներ ունենայ , այնչափ երջանիկ կը գտնէ
ինքզինքը : Իզմէ՛ ետքը յայտնուող բոլոր
նորագոյներն ալ՝ որոնց մէջ Զիֆթէ-Սարափ
եւ Փայլակ մասնաւորաբար շատ գեղեցիկ
անուն մը չինեցին , կը յիշեն անշուշտ թէ
քիչ մը ամէն մարդէ աւելի ե՛ս աշխատեցայ
իրենց եռանդը հրահրելու , ե՛ս գրեցի զի-
րենք , երբեմն նոյն իսկ բռնացայ վրանին՝
որպէս զի կարելի եղածին չափ շատ արտա-
գրեն : Պատճառ մը չունիմ տարբեր ընթացք
մը բռնելու աւելի նորագոյներու հանդէպ
իմ նպատակս ուրիշ բան է . ես աւելի կ'ու-
զեմ իրենց մատնանիչ ընել այն անպատրաստ
վիճակը՝ որուն մէջ կը գտնուին այսօր , ինչ-
պէս նաեւ սա կարեւոր պարագան՝ թէ հա-
կառակ այդպէս ըլլալուն միտնուած են այն
տեսակ ճամբու մը մէջ՝ ուր ամէնէն աւելի
պէտք կայ նախապատրաստութեան , կարո-
ղութեան եւ արժանիքի :

Այդ տեսակ ընթացք մը երբեք լաւ եղբի
մը չի յանդեցներ զիրենք , Եթէ երբեք այսօր
լրագիրներու էջերը բաց են հանդիպած մար-
դուն գրուածքը ընդունելու համար , եւ սկի-
նակի մը յատուկ գծուարութիւնները գոյու-
թիւն չունին , ատկիպ չ'ենթադրեր թէ քննա-
դատութիւնն ու առողջ դատողութիւնը մե-
ռած են բոլորովին , Կան մարդիկ որոնք կը
դատեն , եւ աւելի այդ մարդոց գնահատու-

թիւնն է որ պէտք պիտի ըլլայ նորադոյնե-
րուն : Այդ մարդոց համար կարեւորութիւն
լինի այս կամ այն թերթին կողմէ ո՛ր եւ է
գրողի մը շնորհուած հիւրընկալութեան բնոյ-
թը : անոնց աչքին գրուածքի մը հրատա-
րուած ըլլալը արժանիք մը չի նկատուիր
բնաւ . արժանիքը անոնք գրուածքին մէջ
խել կը փնտռեն , եւ պէտք է ընդունիլ որ
այդ կարգի գատողութեան մը ենթարկուելով
մեր նորագոյններէն մէկ կարեւոր մասին տա-
րանը կրնայ սնանկ եւ նոյն իսկ ի ծնէ
մնալ հռչակուիլ :

Ինչո՞ւ այդպէս ըլլայ . ինչո՞ւ գրելէ առաջ
պատրաստուին , չկազմուին . ի՞նչ հարկ կայ
անպարելու : Եթէ երբեք գրող մը՝ որոշ
արժանիքի մը տիրացած է , ի՞նչ կը կորսնցնէ
տարի մը առաջ կամ վերջը հրապարակ իջնե-
լով : Որչա՛ի ուշ ըլլայ իր յայտնութիւնը ,
այնպիսի ինք կը չանի , որովհետեւ ատով ա-
միւր կ'ունենայ քիչ մը աւելի կատարելա-
գործութիւն : Հիմակուածները այսպէս չեն
ընք . դպրոցական գրասեղաններուն վրայէն
դիպին , քաջաւերուած մեղապարտ ընդու-
նկալութենէ մը՝ զոր իրենց շարադրութեան
ուսուցէն ո՛չ նուազ ողորմելի խմբագիրներ
որամադիր կ'ըլլան ընելու :

Գիտեմ , այս խօսքերը այսօր ծանր կու-
նան իրենց , բայց վերջապէս չպիտի կրնայի
նշի պահել քանի մը խորհուրդներ՝ զորս
խմբագրութիւնս կը թելադրէ ինծի . եւ զորս
կայարարար միայն մէջանալ կը դնեմ , քանի
որ ես ալ իրենց ժամանակին կը պատկանիմ .
Դատկանութիւնը զոր կ'ընեն այսօր , ո՛չ թէ
միայն անարժան է այդ նուիրական անունին ,
այլ էապէս վնասակար է ուղղակի իրենց
բարձրացման , իրենց կատարելագործման :
Պատկանութեան , ինքնահաւանութեան հովը
որ այսօր փքողուցած է զիրենք , յառաջիկ-
այն ժաման ամէնէն մեծ արդիւքն է ինքնին :


Երբ որ ինքզինքին կը հաւնի , երբեք ա-
միւր չիթար : Իրենց համար փրկութեան
միակ ճամբայ մը կայ . առժամաբար քաջուելի
լինի , եւ եթէ ո՛չ կատարելապէս , գոնէ
բնաւորական պատրաստուելէ վերջ միայն
թերեւեալ աւելի նշանակելի կերպով մը ,
իւր քիչ ատենուան մէջ կրնայ գոյութեան

իրաւունք մը պարգեւել իրենց : Այլապէս ,
իրենց տաղանքը , — եթէ ունին , — պիտի
դատաւարաւոր խաթարուելու , փճանալու :
Մնաց որ բանի մըն ալ չի կրնար ծառայել
իրենց այսօրուան արտադրութիւնը՝ որ վաղը
միւս օր , քիչ մըն ալ կազմուելէն վերջ ,
պարզապէս ստգտանք պիտի տայ իրենց , ու
պիտի խպնին երբեմն այդ աստիճան անի-
մաստ , այդ աստիճան անճոռնի ու անամէջ
այլանդակութիւններ ստորադրած ըլլալուն
համար :

Իմ սկանակութեան առեւնս այս բաները
ըսող չկար : Ընդհակառակը , շատ աւելի լայն
ու աննկատ հիւրասիրութիւն մը կ'ընէին թեր-
թերը , եւ շատ աւելի մեծվայելուչ ոչնչու-
թիւններ դիրք բռնած էին օրուան գրակա-
նութեան մէջ : Գրող մը միայն , որուն ա-
նունը երախտագիտութեամբ պիտի յիշեմ
միշտ , ինծի նոյն այդ խորհուրդները տուաւ ,
խորհուրդներ որոնց հետեւելով չատամսե-
ցայ սակայն , եւ պէտք կա՞յ ըսելու թէ ես
չանցեայ ատկէ : Հիմայ խորհրդատուները
չառ են , ամէն մէկը կոթնած փորձառու-
թեան մը վրայ՝ որուն վաւերականութիւնը
ո՛չ ոք կրնայ կասկածի ենթարկել : Ու չեմ
հասկնար թէ ինչո՞ւ չեն հետեւիր ատոնց
խորհուրդներուն :

ՄԷԻՍԷՏԷՍ

ԼԻԲԱՆԱՆԻ ՎՐԱՅ ՆՈԹԵՐ



Հիւսիսէն Դաժասկեան Տրիպօլիս , արեւ-
ելքէն Սուրիայի կուսակալութիւնը , հարա-
ւէն Դազա եւ արեւմուտքէն ծովը ու Պէ-
րութի կուսակալութիւնը՝ Լիբանանի կռաւ-
մարչութեան սահմանները կ'որոշեն , Սուրի-
այի ճիշտ կեդրոնը գրեթէ , վեց հազար քի-
լոմէրը տարածութիւն մը սանկ :

Ծովէն դիտողին համար ոչ մէկ լեռ աչ-
խարհի մէջ այնքան ծիծաղկոտ ու հմայիչ
հովեր կը տարտղնէ որքան Լիբանան , Սու-
րիացիին ձէպէն-Լիպնանը՝ որին վրայ կ'ապրի
ինք եւ որին սիրուն ոչ մէկ բան կրնայ փո-
խել : Տուներ , հազարներով ցանցնուած հոս
հոն , պանդոկներ , վիլլաներ , ամէնն ալ իրա-

րու մօտ ձորերու մէջ, անտառակներու գիրկը ու առուներու առջեւ, չեռը քաղաքներու են փոխարկած, ու շոգեկառքը երկու երեք հազար մէթր բարձրութեան վրայ գիւղակ ճամբաներ կը գծէ դանդաղ ու յոգնած:

Մէկ լեռ չորակեր Լիբանանը. հոն գիրկ գրկի ու թուշ թուշի տուած են ձէպէլ-Աքքար, ձէպէլ-Մաքմալ, ձէպէլ-Սաննին, ձէպէլ-Պարուք, ձէպէլ-Թումադ-Նիհա, երկրորդը 3040 մէդր բարձրութեամբ, ու միւսներն ալ քիչ մը աւելի կամ պակաս:

Չոր ու ցամաք լեռներ չեն ասոնք: Լիբանանը կանանչ է միշտ: Նուշը, նարինջը, կիտրոնը, ձիթապտուղը մէկ անգամ չեն հաւքուիր, ծառերը կը պտղորին կը կանչին գարունն ալ, ամառն ալ, աշունը ու ձմեռը միշտ տերեւաթափին հետ: Ամէն ձորէ առու մը կ'անցնի, ու ջուրերը մեծ պղտիկ կը հաւքուին կը միանան իրար՝ կազմելու համար գետեր, որոնց անուները հենց պիտի դնեմ հուսա:

Նահր-էլ-Գատիշա՝ ձէպէլ-Մօգմալէն ծագում կ'առնէ, ու Տրիպօլի մօտերը ծովը կը թափի: Նահր-էլ-Ճօղ՝ ձէպէլ-Թաննուրինէն, Նահր Իպրահիմ — Ատօնիսը հիներուն — ձիւնիէյհ կոչուած գիւղին մօտերէն ծովը կը թափի: Նահր-էլ-Տամուր, հին Դամիրասը — Նահր-էլ-Ուլէհ, — որ հին ատեն կը կոչուէր Պօպրունուս, Նահր Պէյրութ՝ Մակօրաս անունով ճանչցուած, ու վերջապէս Նահր-էլ-Քէլը, կը կազմեն աչքի զարնող բոլոր ջուրերը Լիբանանի:

Նահր-էլ-Քէլը պէտք էր մասնաւորել անոր համար որ Պէրութի անուշ ջուրը կը մատակարարէ:

Սքանչելի կլիմայ մը ունի՝ Լիբանան, որ կը համապատասխանէ սակայն Իտալիայի պայծառ երկինքին ու Սպանիոյ ջինջ բնութեան: Ամառը միջին հաշուով գէրօյէն վեր սանդիկրատ 20°, իսկ ձմեռը 12°, Ծովեզերքին մօտիկցող տեղերու մէջ կրնայ ասի մինչեւ 36° ի բարձրանալ, ու շատ ցուրտ ընող սակաւ տեղերու մէջ ալ իջնել գէրօյէն վեր մինչեւ 40° ի: Ձմեռը ցուրտ հովը հիւսիսային արեւմուտքէն կը փչէ, ու խառնիճ որ չի զրկեր Լիբանանը իր այցելութենէն, գարնան

մէջ կը խաչէ կը խորովէ ամէն բան, սոսկալի տաքը մանաւանդ որ մէկ չարժեքով անուշ զով սարերէն քեզի մինչեւ Հնդկաստան կը խաւրէ կարծես: Բարեբախտաբար հազիւ չաբաթ մը կը տեւէ ասի:

Քուրա, Շուֆ, Մէզն, Քէսրուան, Չաւէ, Պադրուն եւ ձէզզին եօթը դայմաճաճութիւններ են՝ Լիբանանի կուսակալութեան ներքեւ. ասոնցմէ վատ է՝ նախէն եւ 931 զիւղեր: Պապպոս եւ Պէյթ-Էտփի կառավարչանիստ երկու կեդրոններն են, ձմրան ու ամառուան համար, երկու շատ գեղեցիկ աւաններ:

Լիբանան երկրագործութեան բոլորովն անյարմար ըլլալով, աղքատ ու միջնակարգ ժողովուրդին համար ապրիլը, զրամ վաստիլը բաւական մը ծանր դործ կղած է: Սակայն տեղական արտադրութիւններու եւ մետաքսի վրայ բաւական մեծ գործ մը կընէ տարուէ տարի օտար երկիրներու հետ, որոնց մանրամասնութիւնը վերջը:

Մրցակցութիւնը զոր ստեղծած են իրենց մէջ՝ այլադաւան ցեղերը Լիբանանի, կրթական տեսակէտով հսկայ արդիւնքներ ձեռք բերած է: Յիսուս տարի առաջ մէկ կարգով դրել գիտցող հազուագիւտ է եղեր տեսնել, հիմակ նոր սերունդին մէջէն ոչ ոքի կրնաս հանդիպիլ որ իր մայրենի լեզուին՝ Արաբերէնին հետ՝ մէկ երկու օտար լեզուներ չ'աօթի: Ամենէն յետին գիւղը դպրոց մը ունի, ինքն դիրն այն է որ կը վճարեն ալ, առանց բացառութեան:

Մինչեւ անցեալ տարի 650 ցերեկայ եւ 25 գիշերօթիկ դպրոցներ հաշուած էին Լիբանանի մէջ հետեւեալ մանրամասնութեամբ:

Ցերեկայ	վարժ. մանչերու	500 հատ,	17,000 աշակրտ:
»	»	աղջկանց	150 » 5,800 »
Գիշերօթիկ	»	մանչերու	16 » 1,380 »
»	»	աղջկանց	9 » 370 »
Սէմինէրիա		10 »	300 »

Կաթոլիկ միաբանութիւններէ վատ, որոնք՝ պէտք է ըսել՝ կրթական անսպէշտով կարեւոր գործեր ըրած են Լիբանանի մէջ, կան նաեւ Անգլիական ու Ամերիկեան երկու միաբնակարարութիւններ, եւ Գուէյքընքը:

Ու զեռ պէտք է ըսել որ դպրոցներու չափ զանազան յարանուանութեանց եկեղեցի-

ներք, վանքերը ու մանաստանները կը շատանան հոն :

Չմտնալու, համար ըսեմ որ մերկններէն Հայ-Հռոմէականները Չիմմառի մօտ վանք մը ու կարեւոր միաբանութիւն մը ունին հոն, զպոյց մը եւ գրատուն մըն ալ :

Բարեսիրական հաստատութիւններէն պէտք էր մտնանիշել Պէյթ-էտ-տինի մէջ գտնուող վերանորոգող զոր Ռիւսթէմ փաշան չինել տուած է : Գուէյքընները ունին հիւանդանոց մը Պրումմանայի մէջ : Մ. Թ. Ուալտմէյըր երեք տարի առաջ հիմնած է նաեւ յիմարանոց մը Ասֆուրիայի մէջ :

Օրուան արաբ գրականութեան ամենէն մեծ կեդրոնները եգիպտոսէն ետքը Պէրութը ու Լիբանանը եղած են : Նախապէս ուրիշ հանդէսի մը մէջ ինչպէս դիտել տուած եմ, գրականութեան հաշտոյն պզտիկ գործ մը էր որ սարքած են այս մարդիկը : Նիւթէս լիզելու համար՝ չպիտի խօսիմ Պէրութի գրական գործունէութեան վրայ : Ըսեմ միայն որ Լիբանան իր կարգին բաւական կարեւոր էր մը կը խաղայ այսօր այդ տեսակէտով : Իպրահիմ պէյ էլ Ասվատ կը հրատարակէ Արաման անունով, թերթ մը Պաապտայի մէջ : Խալիլ էֆէնտի Պախուզ՝ վաճառականաբան եւ երկրագործական հանդէս մը էլ-Ռիւստան անունով, դարձեալ Պաապտայի մէջ : Էլ-Արզ կամ Les Cèdres արհեստագիտարան թերթը հրատարակողն է Շէյխ-Ֆիլիպ-է-Խադէն՝ Ճիւնիէի մէջ :

Ալի պէյ-Նասրէտտին կը խմբագրէ Էլ-Ռիֆա շարաթաթերթը : Իսկ Էլ-Ռիւսիզ բժշկական ու գիտական ամսաթերթին խմբագրութիւնը ստանձնած է Տոքթ. Լուի Էլ-Խադէն :

Միշտ ստիպուած եմ՝ Նօթերուս մէջ ամբողջ ըլլալու համար՝ մէկ բաժնէն միւսին անցնելու ատեն փակագիծեր բանալ : մէկը յիմանալու համար՝ միւսը չը գեղչել : Ուստի հարկ մըն ալ չէ՝ իսթագրութեան մէջ :

Շերամարուծութիւնը էն կարեւոր զբաղումը եղած է Լիբանանցիներուն, ինչպէս նաեւ Պէրութի, Տրիպօլի ու Սիդօնի մէջ : Միջին հաշուով կը հաւաստեն որ տարին 3,000,000 քիլօկրամի բերք մը ունի : Խո-

ղակին օխան չորս կամ հինգ ֆրանքի մէջ կը տարուբերի : Երկու տարի առաջ առաջին կարգի ապրչումին քիլօն 45 ֆրանքի, իսկ քիչ մը վար տեսակը 41ի ծախուեցաւ : 1899 թուականին հարիւր քիլօնոց չորս հազար երկու հարիւր հակ մետաքս խաւրուած է Պէրութի նաւահանգիստէն Ֆրանսա : Գէորգ էֆ. Թորգոմեան, շերամագործական վարժարանին անօրէնը, հինգ վեց ամիս առաջ երբ Պէրութ եկաւ՝ լուսնադակ Սուրիայի շերամի գործերը աչքէ անցընելու համար, իր տեղեկագիրը պատրաստելով փալլուն հանդէս մը սարքեց, որ տտեն արժանիքի մրցանակներ բաշխեց բոլոր անոնց որոնք յայտնի ջանքեր ըրած էին շերամի գործին մէջ, Ասոնց մէջ ուրախութեամբ տեսնուեցան Չիմմառի վանքէն երկու Հայ-Հռոմէական վարդապետներ ալ որոնք առաջին կարգի միտալի արժանացան : Նոյնպէս իր այցելութեանէն մեծապէս գոհ մնաց ու քաջալերական ձեռնարկներ ըրաւ Վահան էֆ. Սուրէնեան որ վերջերս Երկրագործական նախարարութեան կողմէ այն կողմերը զրկուած էր՝ երկրագործական այցելու քննիչի պաշտօնով : Կը տեսնուի ուրեմն որ եթէ Լիբանան ցորեն շատ չի կրնար արտադրել, շերամի ընդարձակ գործի մը տիրացած է արդէն բարեխնամ կառավարութեան շնորհիւ : Սակայն իր տեղական արտադրութեանց մէջ կարեւոր տեղ մը կը գրաւեն դեռ ձիթապտուղը, գինին, օղին, օճառը, մատուալը (racine de reglisse), ծխախոտը, եւ սպունգը : Ստուգուած է որ Լիբանան տարուէ տարի իր ձիթենիի անտառներէն 20 միլիոն քիլօ հունձք մը ձեռք կը բերէ, եւ իւրը որ կըստացուի տարին 2,500,000 լիտր, մօտաւորապէս կ'արժէ 1,500,000 ֆրանք :

Քաֆար Շիմալի, Ծուրիֆաթի մէջ օճառի գործարաններ հաստատուած են, ուրկէ տարեկան արտադրոյթը եղած է 250,000 քիլօ, որ կը նշանակէ միջին հաշուով 200,000 ֆր. :

Միջերկրականի ամենէն գեղեցիկ սպունգը, Լիբանան իր եզերքէն կ'արտադրէ : Ուստի Պէրութիւնը մայիս 15էն կը սկսի մինչեւ հոկտեմբեր : Երեք կարգի սպունգներ ձանչուած են, առաջինը 80—120 ֆրանք, երկրորդը 16—25 ֆրանք. կարմիր տեսակը

5—8 ֆրանք : Պագրուհի եւ ճէպարի բնակիչներն են առհասարակ այս սրտորդութեամբ գրադոյնները :

Կաղնիի , շոճիի , ձիթենիի անտառները չեն պակսիր Լիբանանի մէջ , արմաւենին հեռացած չէ , ու պտղատու ծառերը կարծես աջորդած՝ հին ժամանակներու եղեւինէն լուսն ուրկից Սողոմոն իր ատաղձը կը հայթայթէր , եւ Սիդոն ու Տիւրոս հսկայ գործ մը կ'ընէին : Միայն չորս հարիւր եղեւինի ծառեր մնացած են հիմակ Պշարայի շրջակայքը , մէկ քանիներ ալ Պարուքի եւ Այն Զհալլայի մօտերը : Այս ծառերուն տուած փայտը շատ նշանաւոր եղած է : Կըսուի նաեւ որ այս քանի մը հարիւր եղեւինները պատկառելի հնութիւններ են ինքնին :

Իբր գեղազործական արտադրոյթ՝ Լիբանանն տուած է ու կուտայ ալ միշտ հսկայ քանակութեամբ մատուտակ (միջան ֆոֆլ) , որ Եւրոպա զրկուելով կը պատրաստեն անոր փոշին գեղահասներու համար , եւ ուրիշ պատրաստութիւններ :

Երկաթի , պղնձի , ծծումբի , մարմարի ու կապարի հանքերը չեն պակսիր Լիբանանի լեռներուն մէջ :

* * *

Ու հիմակ որ ինքզինքս ազատած կըզգամ շատ դրական այս հաշիւներուն ու տեղեկագրութեան ձեռքէն — բնութեանս հետ շատ չարմարող բաներ վերջապէս — միտքս դարձեալ կը վերադառնայ այն լեռներուն , այն ջուրերուն , ու մութ անտառներուն ուր կեանքը բանաստեղծական երջանիկ ժամեր կը համրէ միշտ :

Բերա

ԽՈՍՐՈՎ ՔԵՇԵՇԵԱՆ

ԿԵՍԱՐԵԱՆ ԵՂԱՅՐՆԵՐԸ՝ Տեարք Միհրան , Թուֆիկ , Խաչիկ , Նշան եւ Ներսէս Կեսարեան , ինչպէս նաեւ Տիկին Աճէմեան պէյ , դառն կ'որոշուտ մը ունեցան վաղահաս մահուամբ իրենց եղբոր , ՏՈՔԹ. ԳԵՆՐԳ. ԿԵՍԱՐԵԱՆԻ , որ կարճատեւ հիւանդութենէ մը ետք իր մահկանացուն կնքեց Բարիզի մէջ ուր ամուսնացած եւ հաստատուած էր իւրեւ

րժիշկ : Երեքշաբթի օրը , երբ յուզարկուտութիւնը կը կատարուէր Ֆրանսական ուտանին մէջ , այստեղ՝ Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին՝ հոգեհանգստեան Պատարագ եւ Պաշտօն մատուցուեցաւ , խոսն քաղմութեան մը ներկայութեամբ , զիտարարար բժիշկներէ , առեւտրական ու սեղանաւորական դասին պատկանող ծանօթ անձնաւորութիւններէ բաղկացած որոնք փութացած էին իրենց համակրանքը ու ցաւփցութիւնը անձամբ յայտնել այս տխուր աւթիւ Կեսարեան Եղբայրներուն որոնք որքան ծանօթ ու յարգուած վաճառականական հասարակին վրայ՝ ուր փայլուն դիրք մը կը գրաւեն , նոյնքան սիրուած ու յարգուած են իրենց աշնիւ դպրցումներով՝ ամէն բարեբախտ , կրթասիրական ու գրասիրական ձեռնարկութիւններու օժանդակելով :

Բերայի քարոզիչ Տ. Հմայեակ եպիսկոպոս մատոյց Պատարագը , եւ յուզիչ դասական մը խօսեցաւ , նկարագրելով վաղամեա երիտասարդին կեանքը՝ զպրոցական օրերէն սկսեալ մինչեւ համարաբանական շրջանը , ուր ստացաւ Տօքթորութեան վկայականը , եւ բժշկական արուեստը յաջողապէս կիրարկեց Բարիզի նման զփուրքահամ կեդրոնի մը մէջ ուր կրցաւ գիրք մը չիլնել իրեն եւ պատիւ բերել որչափ Կեսարեան անունին՝ նոյնքան նաեւ հայ համայնքին : Քարոզիչ Սրբազանը յիշեց նաեւ Կեսարեան գերդաստանին բոլոր անդամներուն ընտիր բնութեանութիւնները եւ երկնային միթիքութիւնը հայցեց անոնց կրած այս դառն կորուստին առթիւ :

Եկեղեցական արարողութիւններէն ետք , ներկաները իրենց ցաւակցութիւնները յայտնեցին Կեսարեան Եղբայրներուն ինչպէս նաեւ ողբացեալ բժիշկին քեռայր Տօքթ. Տիգրան պէյ Աճէմեանի եւ մօտաւոր ազգական Սիմոն էֆ. Գայսէրլեանի ու Թօքթեան Տեարք : Հրապարակաւ կը փութանք մեր ալ խորին վշտակցութիւնը յայտնել՝ այս սգալի մահուան առթիւ՝ վաղամեակի Տօքթ. Գ. Կեսարեանի ընտանիքին ու բոլոր պարագաներուն :

ՀԱՆՐԱՊԵՏ

ԱՐՁԱԿ ՔԵՐԹՈՒԱԾ

Հոգի Աստուծոյ շարժեալ
ի վերայ ջուրց :

Ս. ԳԻՐԳ

« Եղիցի ըյս » : Ու քառալին տըղանդէն
Մթութիւնը խոյս կուտար :
Վարագոյրը բացուած էր ,
Ու տիեզերք Արարչին հետ դէմ առ դէմ ,
Երկիւղով մը կը դողար :
Աստուած դիտեց ,
Իր նայուածքը հրակէզ ,
Որմէ , ետքը փոխ պիտի տար
Արժիւններուն ու կոյսերուն ,
Կոծեց չարս դին .
Ինք ալևոր , ինք յոգնած էր ,
Ու վիզը ծուռ ,
Հանդիսաւ խորշ մը որոնեց :
Տիեզերքը դեռ մանուկ ,
Կայտառ , յորդում մ'ունէր կարծես .
Տարերքները , նորածին ,
Կը խայտալին անհուն ըյսով ողողուն :
Անբաւութիւնը կը շարժէր , ու կայուն ,
Խորշ մը չիկար ուր Արարիչը հանդէշէր :
Ամէն տեղ հանդիստ դռնեկէ յուսահատ ,
Ինկառ աշխարհ , ջուրերուն վրայ Ովկիանին
Ու հոն ծփալ սկսաւ :
Լոյսէ մաղերը տարածած ալեաց վրան ,
Ճակատը՝ վեր , լուսնակին ,
Ճակատը վեհ՝ բոցէ տարերքներուն դարձուց
Ու հեքով մը մտածեց .
— « Ամէն բան կատարեալ է ,
Յաւերժական իմ կեանքէս ,
Բաշխեցի տիեզերքին ,
Մեծ մերեխան լարեցի
Անհունութեան մը համար : »

Աշխարհ ցնցուիլ սկսաւ ,
Իր Աստուածային հիւրին ներքեւ կը դողար անձայն :
Փոթորիկը փախէն հեռու կը փախչէր ,
Կապարի պէս ծանր լուծեան մէջ
Որոշ կը լուէր Աստուծոյ սրտին ձայնը ,

Հատիկ, հատիկ, սակայն լեցուն անբաւ սարսուռով :
 « Ամէն բան կատարեալ է, » շարունակեց մտածելը
 « Զննում, վերածնում, ծնում ու ջնջում, »
 « Ամէն բան պիտի փոխուի, ու միշտ »
 « Հիւլէ մը պիտի չի ջնջուի ամէնքէն, »
 « Խո՛րշ մը, հանդիստի անկիւն մը,
 « Խո՛րշ մը տուէք յողնած Աստուծոյ համար : »
 Վիթխարի տարերք շարունակեցին ընթացքնին,
 Փոթորիկը հեռուները մանչել սկսաւ,
 Ովկիանը կը ծփար անհանդարտ ու փրփրալի,
 Եւ յողնած արարչագործութենէն,
 Յօրանջեց Աստուած :
 Զանճրոյթի այդ հառաչը Աստուծոյ սրտէն թռած
 Գնաց Եդէմ, հողին խառնուեցաւ,
 Ու բոպէ մը ետք Ադամ՝ ինք ալ ձանճրոյթ համակ՝
 Հանգիստի անկիւն մը կ'որոնէր :

* * *

« Նորութիւն » շարունակեց մտածել Աստուած,
 — Վեցերորդ օրը ծագած էր արդէն —
 « Ահա նոր արարած մը, դո՞ւն ալ կը ձանճրանաս .
 « Լա՛ւ, բնութիւնը քեզի կը նուիրեմ :
 « Արեւ, լուսին, Ովկիան, հալ, զեփիւռ, ծաղիկներ,
 « Թող փայլին, թող երգեն, թող բուրեն քեզ համար :
 « Ի՞նչ, գո՛հ չե՞ս, առ քեզի ընկերուհի մըն ալ,
 « Զանճրոյթի շփացած զաւակ »
 Եւ Մայիսի բուրումնով լեցուն,
 Աստուած՝ Եւան կը նուիրէր Ադամին :
 « Միայն, » ըսաւ, « երբոր յողնիմ, ինձ համար
 Տեղ մը պահեցէք, որ հանգչիմ ձեր սրտին մէջ » . . .
 Իսկ Ադամ կը յօրանջէր անդադար,
 Դժգոհ կարծես բնութենէն, աշխարհէն,
 Անհասելի խռէպին կը յառէր :
 Եւա կը համոզէր Ադամը,
 « Ուզէ, Ան Աստուած է, ամէն բան կուտայ :
 « Գեղեցիկութիւն, գիտութիւն, անմահութիւն » :
 Աստուած տուաւ բոլորն ալ,
 Անյադ հողին չէր գոհանար ատոնցմով :
 « Տո՛ւր, տո՛ւր, աւելին տուր,
 « Աստուածութեանդ կէսը տուր, »
 « Կը ձանճրանամ, անխ, հանգչելու խորշ մը տուր : »

* * *

Ովկիանին վրայ դեռ կը ծփար Աստուած :
 Մտածեց « Հանգչելու խո՞րշ մը,
 « Բայց ես չի գտայ զայն . . . »

Ու իրիկունս գէտ, լուսած Ագամի ձեռքէն,
 «Եկու՛ր, տանիմ», ըսաւ, «փնտռած հանգիստդ, հո՛ն»
 Քալեցին, քալեցին: Լուսնկան կը կարմրէր:
 Ագամ տղա մը զգաց յանկարծ.
 Աստուած մեկնած էր քովէն.
 Շիրմին սե փոսը կը փռուէր սաքին տակ.
 Եւ ամպերէն Աստուած՝ որոտալալ,
 «Չանձրոյթի զաւակ,
 «Յաւիտենական հանգիստդ հոն է» ըսաւ . . .

Իզմիր

Թ. ՈՐԵՆԵՐԱՆ

ԵՐԵՔ ՏԱՐԻ ԱՐԺԱՆԹԻՆԻ ՄԷՋ

ԴՕՍԷՆ ՏՕՐԻ ՆԵԱՔԻ ՌԻՂԵՒՈՐԱԿԱՆ ԱՐԿԱՇՆԵՐԸ

Այդչափ ատեն կաշկանդուած մնալով, անգամներս կատարելապէս ընդարմացած էին, այնպէս որ ոտքի ելլելու առաջին փորձս ո՛ր եւ է արդիւնք մը չտուաւ: Մեաները տեսնելով որ չպիտի կրնամ իրենց հետեւիլ, մէյմէկ բարակ գաւազան առին: Առքերնին եւ սկսան աղօսոր մը ծեծել զիս: Երկու իրենց աչքին տանջանք մը չէր, այլ թրած անդամները կենդանացնելու սահմանաւոր դեղ մը՝ որուն ազդեցութիւնը իսկոյն զարկ եղաւ ինծի: Հազիւ ամէն մէկէն վեցական հարուած մը կերած էի, երբ տկարութիւնս մոռնալով ոտքի ելայ, եւ սկսայ վազի կատաղօրէն:

Վաղած ատենս սկսայ սլզտիկ յոյս մը տածել ազատմանս մասին: Հնդիկներու բարբարոս քիչ չատ տեղեակ ըլլալով, գիտէի թէ ո՛ր եւ է մահուան դատապարտուած մարդ քիչ միջոց ունի ազատելու: Առաջին միջոցս է որ, մահապարտը ինքզինքը քիչ չատ ազատ զգալուն պէս պէտք է վազէ մինչեւ մէջը տեղ, առանց զինքը հետապնդող բռնուկներու: Եթէ երեք յաջողեցաւ, կեանքը ազատած նկատել: Երկրորդ միջոցը կը կայանայ վարպետութեամբ Հնդիկները խաբելուն մէջ: Պէտք է անանկ հնարք գտնել որ Հնդիկները ինքզինքնին պար-

տուած նկատեն: Երրորդ միջոցը կուրծք միայն կը յաջողի: Մահապարտը Հնդիկներէն մէկը կ'ընտրէ եւ անոր հետ կը կռուի ո՛ր եւ է զէնքով մը, կամ առանց զէնքի: Եթէ երեք յաջութէ՛ կ'ազատի:

Արդ, այս միջոցներէն առաջինը օգը եւ լաւ էր ինծի համար, որովհետեւ վազել սկսելէս վերջ հազիւ հարիւր քայլ մը առած էի, երբ Հնդիկները յաջողեցան զիս բռնել:

Բռնուելէս վերջ, ատրճանակով հնդիկը՝ որ սպաններէն խօսած էր ինծի հետ՝ ծառին վրայ գտնուած միջոցիս, ըսաւ.

— Եթէ նոր միջոց մը չգտնես, մահդ կրնաս մօտալուտ նկատել, եւ արդէն ի՞նչ պիտի կրնաս գտնել. աւելի լաւ է որ երեք բան խնդրես մեզմէ՝ մեռնելէ առաջ. վատահ կրնաս ըլլալ թէ խնդիրքներէդ գոնէ երկուքը չպիտի մերժենք:

Պզտիկ յոյս մը արթնցաւ ներսս:

— Անթիլ՝ եմ, ըսի իրեն, հաց եւ ջուր՝ եթէ կը հաճիք:

Անմիջապէս ամէն տեսակ ուտելիքներով լեցուցին չորս կողմս: Սկսայ անյապօրէն լափել, մինչդեռ Հնդիկները, անհամբերութեան չարժուամներով երրորդ խնդիրքս կ'ուզէին գիտնալ:

— Օ՛հ, պատասխանեցի իրենց անվրդով,

երրորդին համար մի՛ աճապարէք այդչափ, որովհետեւ դալ տարի միայն պիտի յայտնեմ:

Երբոր սպաներէն գիացող հնդիկը իր ընկերներուն թարգմանեց պատասխանս, ամէնքն ալ տարօրինակ գտան զայն: Պզտիկ խորհրդակցութիւն մը ունեցան, որու միջոցին վրձակցին թէ ազատման երկրորդ միջոց մը ընտրելու իրաւունքէս զրկուած էի, քանի որ չէի ուզեր երրորդ խնդիրք մըն ալ ընել իրենց:

Կը մնար երրորդ միջոցը: Յեղին ամէնէն կորովի մարդոցմէն մէկ քանին իմ կողմս յառաջացան, եւ առաջարկեցին որ կռուիմ իրենցմէ մէկուն հետ:

Հրաւերը ընդունիլը պարզապէս խենթութիւն պիտի ըլլար: Ան աստիճան ընկճուած էի կրած տանջանքներէս, որ նոյն իսկ ցեղին ամէնէն տկար մարդուն հետ չպիտի կրնայի յաջող կռիւ մը մղել: Ո՞վ պիտի ուզէր կռուիլ իմ տեղս:

Մերժեցի, եւ որպէսզի բոլորովին գէշ դադափար մը հաւամ իմ վրաս, մերժումս սապէս մեկնեցի սպաներէն գիացող Հնդիկին:

— Ձեռ ուղեր կռուիլ, որովհետեւ կը վախնամ որ կռուի պահուն աշուրներէս մէկը վրայ տամ: Ատրկա պատճառ պիտի ըլլայ որ եթէ երբեք օր մը մահը գայ զիս տանելու, միակ աչքով մը միայն կարենամ զայն զիտել: Մինչդեռ ես, կ'ուզեմ մահս երկու աչքով ընդունիլ, քաջաբար, ինչպէս պէտք է ընեն բոլոր այն մարդիկը որոնք վատ չեն:

Հնդիկը միւսներուն թարգմանեց այս պատասխանս, որ մեծ սրամատութեան աւելի տուաւ:

Իսկոյն վրաս յարձակեցան կատաղի ձայներ արձակելով, եւ զիս տանջանքի յատկացուած վայրը քաշքշելէ վերջ, ամուր մը կապեցին անոր ճիշտ կեզրունը հաստատուած ցիցի մը:

Ալ յիմարութիւն էր ազատման մասին յոյս առնել: Կեանքս այդ ցիցին վրայ վերջ պիտի գտնէր: Հնդիկները շուրջս խմբուեցան եւ սկսան պատերազմական պար մը դարձնել, տասը վայրկեան մը տեւեց այդ պարը, եւ երբ դադարեցաւ, ահայ որ Հնդիկներուն պետը ինծի կը մօտենար:

Ամէնքն ալ յարգանքով խոնարհեցան ա-

նոր առջեւ: Պետը հանդիսաւոր քալածքով մը ինծի մօտեցաւ, ուշադրութեամբ զննեց կապերս, եւ իր մարդոց պատուիրեց որ քիչ մը աւելի սեղմեն զանոնք: Յետոյ, հրամային զսրձադրուելէն վերջ, մինչեւ որոշ նաւորութեամբ մը բացուեցաւ ինծի, եւ ձեռքի աղեղը լարելով ուղղեց վրաս:

Կարծեցի թէ պիտի սպաննէր զիս, եւ խնդրեցի որ քիչ մը պայմանաժամ տան ինծի: Պետերին կ'երեւայ թէ սպաներէն կը հասկնար: Անմիջապէս վար առաւ աղեղը եւ հարցնել տուաւ թէ ի՞նչ կը փափաքիմ:

Իմ մասիս, կարծելով թէ վրանին աղեղութիւն մը կրնամ բանեցնել, պոռացի բարձրաձայն.

— Հոս' քու անիծած ցեղիդ թէ ձեզի ո՛ր եւ է մեծաւ մը հնացուցած մարդ մը սպանելը աղէկ բան չէ, եւ թէ իմ անէծքներով երկիրէքէն կրակ պիտի թափի ձեր վրայ:

Մարդիկը սակայն փոխանակ վախնալու ա՛լ աւելի բարկացան: Պետերին կրկին աղեղ իմ վրաս ուղղեց: Առաջին երեք հարուաները ինք պիտի արձակէր: Նեա մը սուրաց գէպ ի իմ կողմս, եւ ճիշտ գլխուս վրայէն անցնելով մխրճուեցաւ ցիցէն ներս:

... Յանկարծ, հրաղէնի ձայնի նմանող աղմուկներ լսուեցան, եւ դուռնաւոր լոյսի շերտեր լուսաւորեցին տանջանքի այդ վայրը: Պար մուծը գրկած էր արդէն: Այդ լոյսերը անձրեւի պէս կը անդային, Հնդիկները առելի աղաղակներ արձակելով սկսան փախչիլ: Մէկ քանին, ծնրադրած, կ'երկրպագէին անդադար:

Այդ միջոցին ձեռք մը կտրեց զիս ցիցին կապող շուանները: Ես ինքս ա՛յն առաջին յանկարծակիի եկած էի, որ հազիւ կրցայ զգալ թէ զիս կը քաշեն կը տանին տանջանքի վայրէն գուրս...

Թ. ԳԼՈՒԽ

Տօմէնկօ և Օնօրիօ նորէն կը յայտնուին. — Ազատում. — Փախուստ դաշտին մէջէն. — Տօմէնկօյի ողիսակներ. — «Անիծում...». — Ռոմէն տ'Օրինեաք կրկին միևսկ կը մնայ. — Զիւրու արջաւ մը. — Հրդեհ դաշտին մէջ:

Բնաւ չմտածեցի ինքզինքս պաշտպանել,

մանաւանդ որ իսկոյն ճանչցայ ազատարարս :
Տօմէնկօն էր :

Հնդիկները տակաւին սարսափի մէջ էին ,
ու պիտի հարցնէի Տօմէնկոյի թէ ի՞նչ դիպ-
ւած ուլ այդ կողմերը կը գտնուէր , երբ ինձմէ
խուռն քայլ անդին տեսայ որ ձիաւոր մը
երկու ձի մէկանց գէպի մեր կողմը կը փու-
թացնէ :

— Օնորիօ՛ , պոռացի , ճանչնալով երբեմնի
ինկերս :

— Շո՛ւա , շո՛ւա , ըսաւ արտորանքով ,
համեմակ չուենք կորսնցնելու , շուա ձի-
ւն վրայ :

Պատուէրը կրկնել չտուի , եւ երեքս մէկ
աշուատայր հեռացանք այդ կայքէն՝ որ քիչ
անց գերեզմանս պիտի ըլլար :

Հնդիկները ուշ սթափեցան իրենց վար-
մանքէն , եւ երբ կրցան դադափար մը կազ-
մել իմ աղտամանտ պարագաներուն վրայ ,
որքէն իսկ անադին անջրպետ մը գոյացած
էր մեր եւ անոնց միջեւ :

... երեք ժամ մը տեւեց մեր վազքը ,
փայ միւսնոյն մտեղին թափով : Վերջապէս
Տօմէնկօ յանձնարարեց որ կենանք , եւ ա-
նկողնը գետնին փակցնելով՝ ապահովուեցաւ
թէ ոչ ոք ինկած է մեր ետեւէն :

Երբոր քիչ մը հանգստացանք , սկսայ Տօ-
մէնկօն հարցափորձել : Կը փափաքէի գիտ-
նալ թէ ի՞նչ ըրած էին ինձմէ բաժնուելոնէն
վերջ , թէ ի՞նչ պարագաներու բերամբ կըր-
ցած էին զիս գտնել : Հնդիկը հանդիսաւոր
երևոյթի մը առաւ եւ սկսաւ խօսիլ .

— Օ՛հ , ըսաւ , անիծուած եմ ես , անիծ-
ւած . . . իմ ցեղս զիս վտարեց իր ծոցէն :
Մեր կայքը հասնելուս պէս՝ իսկոյն հօրենա-
կան տունս գացի , բայց մահուան ոգին ար-
քէն իսկ սաւառնած էր անոր վրայ : Մայրս
խաբէ անկողնի մը վրայ տարածուած գտայ
... կարծես հազիւ քանի մը վայրկեան ալ
պիտի ապրէր . . . ծնրագրեցի իր առջեւ ,
թուեցի յանցանքներս , եւ ներում խնդրեցի
... բայց մայրս ականջ չկախեց ինծի :

« — Մայր , մայր , ըսի իրեն , ես եմ ,
բաւական , Տօմէնկօն :

Ան ատեն աշուրները բացաւ . . . վրէժ-
խնդրութեան , կատաղութեան նայուածք մը

թարթեց վրաս . . . ու ես սարսափի մէջ էի
տակաւին՝ երբ սա ահալի խօսքերը արտա-
տանեց .

« — Ապերա՛խտ աղայ , վա՛տ , սաախօս ,
անիծուած ըլլաս . . . ազատա՛ս ռճրագործ մըն
ես դուն , ընտանիքիդ անպատուիչը , գնա՛ ,
գնա՛ . . . անիծուած ըլլաս :

« Վերջին խօսքերը եղան առանք : Բիչ
եաքը մեռած էր արդէն : Այդ օրէն վերջ ա-
մօթի , ստորնութեան կեանք մը սկսաւ ինծի
համար : Յեղիս բոլոր մարդիկը երես դար-
ձուցին ինձմէ : Անցած միջոցիս , մայրեր իրենց
զաւկըներուն ցոյց կուտային զիս , բացատրե-
լով թէ ի՞նչ պարագաներու մէջ անէժքի
ենթարկուած էի մօրս կողմէ : Չորս կողմէն
չարունակ նախատինք եւ անէժք կը տեղար
վրաս : Այդ ատեններն է որ մեր մարդիկը
քեզ զերի բռնեցին , եւ որովհետեւ խոստում
տուած էի քեզ աղտակու , առաջին օրէն
ուրիշ բանի վրայ չմտածեցի : Հետո շատ մը
հրթիռներ բեքած էի , հրախաղութեամբ մը
տօնելու համար իմ կայք վերադառնալու օրս ,
բայց մօրս մահը եւ անէժքը սիրտ չէին ձգած
վրաս : Այդ հրթիռներն էին որոնք այնչա՛փ
սարսափի մտանեցին մեր մարդիկը , եւ պատ-
ճառ դարձան քու ազատմանդ » :

Այն իրիկունը հոն քնացանք , մերկ ու
կարծր գետնին վրայ :

... Որչա՛փ քնացած էի , չիտակը չեմ
կրնար ըսել , երբ յանկարծ զգացի որ բրտօրէն
կ'արթնցնեն զիս , եւ անջիղ զանգուածի մը
պէս կը նստեցնեն ձիու մը թամբին վրայ :
Աշուրներս խոչոր խոչոր բացի , եւ անանկ
կարծեցի թէ նորէն Հնդիկներ զիս գերի կը
տանէին :

Տօմէնկոյի ձայնը զիս ապահովեց :

— Աճապարե՛նք , ըսաւ , ետեւնուս ին-
կած են , եւ շատ ալ մօտեցած են մեզի ,
չո՛ւա , կրցածնուս չափ արագ . . .

Յետոյ , մինչդեռ կը սուրայինք արշաւա-
տայր , Օնորիօ ինծի մօտենալով աւելցուց .

— Քու ձիդ մերինէն աղւոր է , դուն
առջեւէն գնա՛ , եւ մնացածը մեզի թող :

Առանց առարկութիւն մը ընելու հետե-
ւեցայ առաջնորդիս խորհուրդին :

Բիչ ետքը արեւը ծագեցաւ : Բլուրի մը

վրայ գտնուելուս, սկսայ չորս զիս զննել, բայց ո՛չ իմ առաջնորդներս տեսայ, ո՛չ ալ Հնդկիկները: Նոյն օրը այդպէս անցաւ, իրիկուան դէմ, յանկարծ ստիպուեցայ ձիս կեցնել. մօտակայ բլրի մը կողին վրայէն, ձիերու ամբողջ խումբ մը դէպի իմ կողմս կը սուրար: Իրաւ է որ ձիաւորներ չէին տեսնուէր, բայց ես գիտէի թէ այդ զաշտարնակ Հնդկիկները կրնան ինքզինքնին շատ լաւ ծածկել ձիուն մէկ կողին վրայ երկննալով. հնարք մըն է աս՝ զոր սքանչելապէս գլուխ կը հանեն անդիտանները: Այս պատճառաւ ընտել չտարակուսեցայ թէ մեզ հետապնդող Հնդկիկները պահուլած էին ձիերուն միւս կողմը:

Ինչ պիտի ընէի, Ձէի կրնար փախչիլ, որովհետեւ ձիս յոգնած էր, եւ ես ալ ինքզինքս անկարող կը զգայի նոր ճիգ մը ընելու: Խելացի ճամբան՝ սպասելն էր: Քիչ հաքը, ձիերը քովէս անցան, եւ ուրախութեամբ տեսայ որ սխալած էի: Ձիաւոր չկար վրանին: Առոյգ, կորովի ու ռակաւին մարդու ձեռք չանցած ձիեր էին, խառնուած վայրի եղներու, ինչպէս նաեւ ուրիշ այլ եւ այլ կենդանիներու: Սարսափահար երեւոյթով մը ամէնքն ալ քովէս անցան գացին, առանց ինծի ուշադրութիւն ընելու:

Թերեւս, մտածեցի, Հնդկիկներ ետեւէն ինկած են այս կենդանիներուն, եւ անոր համար կը փախչին: Հինգ ատար վայրկեան վերջ բովանդակ խումբը անյայտացաւ աչուրներուս առջեւէն: Մինակս մնացած էի դաշտին մէջ. արեւը խոնարհելու վրայ էր, եւ չէի գիտեր թէ ո՛ւր պէտք էի երթալ: Այդ միջոցին ծուխի պէս բան մը տեսայ՝ որ հեռուէն հօրիզոնը գրկած էր, եւ հեռզհեռ կը տարածուէր: Նախ կարեւորութիւն չտուի, բայց երբ մութը կտնեց՝ տեսայ որ ահարկու, հսկայ բոցեր դաշտին վարի ծայրէն դէպի երկինք կը բարձրանան:

Ան ատեն միայն հասկցայ իրողութիւնը: Դաշտը կրակ առած էր, եւ սրովհետեւ հով կար, կրնար ըլլալ որ քանի մը վայրկեանի մէջ մինչեւ ինծի հասնէր: Խոտերը թիզ թիզ բարձր էին, եւ այնչափ ալ չոր՝ որ ահագին տարածութիւն մը վայրկեանապէս կրակ կ'առ-

նէր: Աս էր ձիերուն եւ միւս կենդանիներուն փախուստին պատճառը:

Սարսափահար՝ խելոյն ձիուն քով վազեցի, եւ թամբին վրայ ցատքելով սկսայ փախչիլ, հեռանալ այդ համայնակուլ բոցերէն, որոնք շատ չանցած կրնային զիս ողջ ողջ խորովել:

(Շարունակելի)

ՄԵՐ ԱՇԽԱՏԱԿԻՆԵՐԸ

ՔՐԻՉԱՆԹէՄԻ վերերեւում՝ Մաւիթ մէջ՝ հաճոյքով ողջունուեցաւ մեր ամէն կարգի ընթերցողներուն կողմէ որոնց շատերուն ապաւորութիւնը լսելու առիթը ունեցածք: Գրական ու գիտական լուրջ եւ չինիլ յօդուածներու եւ բանաստեղծութեանց մէջտեղ սրամիտ ու զրօսալի ֆանթէզի մը սխալ հրապոյրը ունի եւ կը յուսանք՝ ինչպէս հաւաստիքը ստացած ենք արդէն՝ այսուհետեւ պարբերաբար վայելիլ ՔՐԻՉԱՆԹէՄԻ աշխատակցութիւնը:

Երիտառարդ գրիչ մը, ՓԱՅԼԱԿ, որ շատ կանուխէն համակրելի անուն մը չինեց իրեն մեր մամուլին մէջ, կարճ՝ բայց իրական գոյներով ու զգացումով լեցուն գրուածքով մը, Չոր աշիֆները, սկսաւ նուիրել իր աշխատակցութիւնը Մաւիթի ուր ի մօտոյ պիտի հրատարակենք իր մէկ վէպը, մեր կենքէն:

Ոչ նուազ ծանօթ գրող մը՝ գիտական ճիւղին մէջ, ՀՐԱՆՏ Յ. ԱՆԴՐԵԱՍԵԱՆ, — ճարտարագէտ ի Գերմանիա — որուն արհեստագիտական հմտալից յօդուածները հետաքրքրութեամբ կ'արդացուած են միշտ, ՎԻՐԽՈՎԻ վրայ ուսումնասիրութիւն մը զբիւրել խոստացած է մեզ, — մեծանուն գիտնականին մահուան յաջորդ օրն իսկ խմբագրութեանս ուղղուած երկտողով մը, — որուն ընդարձակ անդ մը պիտի տանք, ինչպէս որ կ'արժէ, Մաւիթի մէջ:

ԳՐԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Մէզէի (Խարբերդ) Բարուչիւնեան Ֆոնդներու վարժարանին ուսուցիչներէն Յովհաննէս Էֆ. Շիրվանեան տարեկան մէկ օրինակ Մաւիթ նուիրեց նոյն վարժարանի աղքատ աշակերտներու Թանգարանին, որուն խնամակալութեան ատենապետն է յիշեալը:

ԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ

—> ԶԵՆՈՂ <—

Նոր դարմանում մը. — Յուրսով խոհարարա-
րիւն. — Մանրապուրէր :

Տօքթոր Բիչըրասըն՝ Լօնտօնցի բժշկա-
կան հեղինակութիւն մը՝ վերջերս կոտարե-
լադործուած նշեկարօ-կալվանական (electro-
galvanic) գործիք մը հրապարակ հանած է
իրեն գործան շատ մը հիւանդութեանց,
որոց մէջ կը գտնուին նաեւ՝ հիւծախտը,
կրակաւթիւնը, եւ դեռ այնպիսի հիւանդու-
թիւններ՝ որոնք մասամբ մը անբուժելի կը
հաշուէին : Տօքթ. Ա. Բիչըրասընի գաւ-
աւանակերպին վրայ էն շատ աչքի զարնող
խօսքն անոր չափազանց շատ ունեցած յա-
ւաքիմութիւնն է. բան մը՝ որ գիւտին իրա-
վի ըլլալը կը հաստատէ :

Նշեկարօ-կալվանական գործիքին կ'ըն-
կերթանայ խիտային բազադորութիւններով գոր-
ծարանաւորուած գօտի մը, ներսի կողմէն
լաւ-հաղորդիչ, իսկ դուրսէն՝ գէշ-հաղորդիչ
նշեկներով յարմարցուած : Դօսին իր վրայ կը
կէ, ուղիւ գծի մը վրայ՝ իրարմէ քանի մը
մասնաչափ հեռաւորութիւն ունեցող ծակ-
երէն, այս ծակափքները՝ ամէնն ալ իրենց
մասնաւոր պաշտօնը ունին՝ այլեւայլ ախտե-
րու համար : Ուրիշային գօտին այնպէս մը կը
խարմարցուի մէջքին վրայ՝ իրր թէ ան ալ
մարմնոյն մէկ մասը կազմէր, եւ երբ ելեք-
արօ-կալվանական գործիքէն երկարող խո-
րակալը գօտին ծակափքներուն մէկէն նոր
գորութիւնը ներմուծէ՝ այն ժամանակ կը տես-
նուին յաջող արդիւնքները տառապողին
կողմէն :

Տօքթ. Բիչըրասընի գործիքով բուժ-
ուած մեծատուն մը՝ իրեն համար կ'ըսէ թէ՝
թէ ծնելէն ի վեր մարդէ մը աւելի թուլա-
ւորութիւ կը նմանէր. բժշկի, օդափոխութեան,
լիւթութեան եւ առողջապահական դար-
մաններու ամէն կերպ կիրառումներ ապար-
կէ մնացած էին իրեն համար, քանի որ
թէ քնականէն չունէր կեանքի առողջ մաս-
նիկները : Սակայն բարեկամի մը միջոցով կը

ծանօթանայ Տօքթ. Բիչըրասընի, եւ երեք
տարի անընդհատ կիրաւորումէ մը վերջ՝ մարմ-
նեղ եւ կորովի աղամորդի մը կը դառնայ :

Տօքթոր Ա. Բիչըրասըն՝ Լօնտօնի, Բա-
րիզի, Պերլինի, Վիեննայի, եւ բժշկական
կեդրոններու ղանադան ակադեմիաներուն մէջ
համախոհներ գտած է, որոնց ամէնն ալ ան-
վիճելի կը կարծեն Բիչըրասընեան կիրառում-
ները. հետեւաբար յանձնարարելի :

§ Ստուգեալ Բեւեռները բնակողներ կամ
խուզարկուներ պատմած եւ տեղեկագրած են
թէ՝ բաց օդին մէջ բաւական ժամանակ մնա-
ցած երկաթի կտոր մը իրենց ձեռքերուն վրայ
այն աղբեցութիւնը կ'ընէր՝ ինչ որ պիտի
ընէր վառած ածուխ մը : Հունգարացի քիմի-
ագէտ մը այս բնական հիման վրայ սկսած է
մանդեններ պատրաստել... ցուրտով, Քիմիա-
գէտը՝ միւսը պարունակող ամանը կը դնէ՝ սա-
ռուցման 60 աստիճանը պարունակող օդի մը
մէջ. յետոյ գայն օդապրկի ամաններու մէջ
փոխադրելով՝ կը կնքէ, ճամբորդութեան եւ
տեղափոխութիւններու համար է՛ն ընտրելի
ղիւրութիւն մը ընծայելով : Հունգարացին
եփած միւսը ճաշակողներ՝ կը խոստովանին
թէ՝ իրապէս շատ դժուար է զայն զանազա-
նել կրակով եփածէն :

ՄԱՆՐԱՒԵՐՈՒՄԵՐ

Աշխարհի է՛ն մեծ թատերաբեմը՝ Բա-
րիզի Կրանտ Օրէրայինն է. 100 ոտք լայնու-
թեամբ, 200 ոտք երկայնութեամբ դէպի ներս,
եւ 80 ոտք բարձրութեամբ :

— Է՛ն գեղեցիկ պողպատաբեմը կը գտնուի
Քաննասի մէջ, Ամերիկա, 880 արտապար-
տարածութեամբ՝ 65,000 խնձորների պարու-
նակող :

— Ա. Բարալիացի Պ. Սէմաչըլ Մէք Քըֆի
աշխարհիս է՛ն հարուստ խաշնատէրն էր.
մինչեւ մօտերս 1,250,000 ոչխարներու բա-
նակ մը ունէր, որուն մեծ մասը կորսնցուց
վերջերս :

— Լօնտօնեան պարբերականներէն Թիք
Պիքս՝ դիտական ստոյգ աղբիւրներէ քաղելով
կ'ըսէ թէ՝ մարդկային յիշողութիւնը աւելի
զօրաւոր է ամառուան մէջ՝ քան ձմեռը : Յի-
շողութեան անհետացումին է՛ն մեծ թշնա-

միները՝ — կ'ըսէ — չափազանց կերակուր-
ները, մարմնամարդական չափազանց փոր-
ձերը, եւ ինչ որ քիչ մը անհաւանական կը
թուի՝ մտային չափազանց զարգացումներն են:

— Ամենէն չափ զնգասեղի գործարան
պարունակող քաղաքը Անդղիոյ Պիրմինկըմ
քաղաքն է, ուր ամէն օր առնուազն
37,000,000 գնդասեղ կը շինուի: Ամբողջ Մեծն
Բրիտանիոյ արտադրածը 54,000,000 է օրա-
կան: Յրանսա կ'արտադրէ օրական 20,000,000,
Գերմանիա եւ Հոլանտա 10,000,000, Հետե-
ւաբար 84,000,000 ի պատկառելի գումար մը
կը մեքենագործութի ամբողջ եւրոպական եր-
կիրներուն մէջ: Շատ քիչ անգամ կը պատա-
հի որ գնդասեղ մը կոտորի կամ մաշի, բայց
միշտ կը կորսուի: Ոչինչ համարուած այս գըն-
դասեղները սակայն՝ օրական 1,000 ոսկիի
սպառում մը կընեն հրապարակին վրայ:

Վ. Ա. Գ.

ՅՈՒՇԱՏԵՏԻ

Խառն ժողովը չորեքշաբթի առաւօտ նիստ
ըրաւ Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ՝ նախա-
գահութեամբ Ս. Պատրիարքին որ հաղորդեց
իր տեսակցութեանց արդիւնքը՝ Պատրիար-
քարանի յարաբերական խնդիրներու մասին:

Ժողովին աւարտումէն ետքը, Ն. Սրբադ-
նութիւնը Պատրիարքարան գնաց ուր զա-
ղեցաւ ընթացիկ գործերով, — Կրօն. Ժողովը
յառաջիկայ երեքշաբթի նիստ ընելու հրաւիր-
ուած է, իր օրակարգին վրայ զիջուած ա-
մուսնական ու եկեղեցական խնդիրներով
զբաղելու համար:

Ս. Փրկչի Հիւանդանոցը երկու նշանակելի
բարեգործութեանց առարկայ դարձաւ վեր-
ջերս: Պրուսացի վաճառական Յովաննէս
էֆ. Արաւհամ-Պատեան ու կինը՝ Գում-գա-
բուի մէջ իրենց ունեցած երկու քարուկիր
տուները այդ հաստատութեան նուիրեց. են,
մինչեւ իրենց մահը վարձքը իրենք ստանա-
լու պայմանով. — Պէրութի մէջ վախճանած
Յովակիմ էֆ. Թօփազալեանի կտակին հա-
մաձայն, Հիւանդանոցը պիտի ստանայ 400
ոսկիի գումար մը որ տոկոսի արուած է

Երուսաղէմի Յունաց միաբանութեան քով:

Մասքոս Էֆ. Պալեօղեան, Իզմիրի մե-
ծահարուստ եւ բարեգործ ազգայնը, քաղ-
քին Պասաթանէի կողմը գտնուած ընդար-
ձակ շէնք մը, որ հրեայ վաճառականի մը
սեփականութիւնն էր, զնկելով՝ նուիրած է
տեղւոյն Ներսէսեան որդանոցին: Նոյնպէս
Էլմասեան փողոցը գտնուող Վարպետանե-
րու տունը զնկելով՝ Հոգատար Որբանոց
Հնկերութեան նուիրած է: Ասոնցմէ զատ,
Պալեօղեան էֆ. Իզմիրի երկսեռ որբանոցնե-
րուն կը թողու իր մէկ ընդարձակ տունը որ
տարեկան 60 ոսկի վարձք կը բերէ:

Լիբանանի վրայ Նօթեոս յօշուածադիրը
Խոսրով Քէչիչեան, — արդէն ծանօթ՝ զանա-
զան թերթերու մէջ իր գրուած քննարկը — մէկն
է այն 8 հայ ուսանողներէն որոնք Պէրութի
ամերիկեան լսչկական վարժարանին ընթացք
աւարտած, մայրաքաղաքս եկան՝ կայս-
րիկական վարժարանին մէջ իրենց աւար-
տական քննութիւնները անցունելու եւ վիս-
յականինն ստանալու: Այս ուսանողներէն ճիշ-
տ լսչկական ճիւղին հետեւած են եւ Յը զե-
ղագործական որոնցմէ է նաեւ Խ. Քէչիչեան,
մինչ Խորաբերդի, որ սխալ երթաց իր ծննդ-
վայրը հաստատուել՝ իր արուեստն օգտակա-
րապէս կիրարկելու համար:

Տիկին Արուսեակ Պեղիրեան, անդամիկ
հայ դերասանուհին, որ երկար տարիներէ
ի վեր կը թափառէր անոք անօգնական, կա-
րեկցութեան կարօտ՝ աղքատ ու հիւանդա-
ղին՝ խնկակորոյս վիճակի մէջ Ս. Փրկչի Հի-
ւանդանոցը պատասպարուեր է: Այսօրուան
սերունդը չի տեսաւ Տիկին Արուսեակի երի-
տասարդութեան փայլուն շրջանը՝ բեմական
կեանքի մէջ՝ բայց իր ժամանակակիցներէն
մեզի հասած արձագանգներ կը նկարագրէին
իր դերասանուհիի յաջողութիւնները փայլուն
հաւազատկերի մը, մէջ որ երբեք դաշտկի
չէր տար այս ախօսը վերջաւորութիւնը:
Խեղճ Արուսեակ:

Արժօնատէր Կ. Ս. Իիթիլճեմն

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԵՈՍԵԱՆԵ

Կ. Պոլիս, Ֆինանսերար եօղաշու, Թիւ 27

ՎԱՍՏԱՍՏՈՒՆ ՀԵՐԱՅԻ

ԱՊՐԻԼԻ ԿՎԱՆԱՍՏՈՒՄ
Յաճախողաց դիրքան
համար

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ

Եթէ կ'ուզէք ամէն
տեսակ գոհարեղէններ
ունենալ՝ գիմեյէք
Կ. Պոլս, Ոսկեշաց
Շուկայ մեծ փողոց թիւ 13



Հերմայի վաճառատունը ունի եւրոպական
ճաշակով պատրաստուած գոհարեղէններ,
ամենքն ալ առաջնակարգ ըլլալու պայմանաւ,
Հերմայի վաճառատան գիներն անմիջեւ են,
Հերմայի վաճառատունը ունի արծաթեղէն
առարկաներ,
Հերմայի վաճառատունը ունի ժամացոյցներ
եւ արծաթեայ գաւազաններ (պարփօն),

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հարիւրին քան կանխիկ, մնացեալին հա-
մար շարաքական հարիւրին հինգ վճարում,
Կանխիկ գնողին համար 100ին 5 գեղ,
Գործածուած գոհարեղէններ՝ եթէ վնաս-
ուած չեն՝ 100ին 10 գեղով ետ կ'առնուին,



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի
մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքե-
նայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը
անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ
դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է,
Իոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԵՐ

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն
աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ
դիւրագործածելին ըլլալուն՝ լուսնդակ աշխարհի
մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Ձեռքի, սոբիլիւ ձեռքի, սոբի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառա-
ւորներէն:

ԲԵՐԱ, Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւթին դիմաց.

- | | | |
|--------|---|--|
| ԿԱԼԱԹԱ | { | 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին Դիմաց |
| ՊՈԼԻՍ | { | 1. Սուլթան Համամ. |
| | | 2. Սուլթան Գէյազիտ. |

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կասաբեալ երաշխաւորութիւն

Մասնագիտօրէն զաւառաց բոլոր քաղաքներուն մէջ

ՇԱՐԼՈՒԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՆ ԿՎԱՆԱՍՏՈՒՄ

Ի Բ Ա Ն Կ Ա Լ Թ Ի

46րդ Տ Ա Ր Ե Շ Բ Ջ Ա Ն

Վարժարանն հաստատուած է 1857ին . նպատակն է՝ աշակերտաց տալ կրօնական , բարոյական եւ գիտնական կրթութիւն մը : Վարժարանի վարչութիւնը՝ Վիէննայի Մխիթարեանց ձեռքն է : Ուսուցչական մարմինը (corps enseignant) որ կը բաղկանայ Մխարաններէ եւ վկայեալ արտաքին ուսուցիչներէ , պիտի կազմեն այս տարի 21 հոգի : Ուսմանց ծրագիրն է՝ արդի երկրորդական դպրոցներու (école secondaire moderne) յատուկ յառաջագիրը , որ կը համապատասխանէ գերմանական Բէյալական դպրոցին (Realschule) յառաջագրին . բայց ըստ կարի յարմարեցուած է այս ծրագիրը միջավայրի պիտոյից : Վարժարանիս կոտորեալ ընթացքն աւարտող աշակերտները կրնան շատ դիւրութեամբ եւ առանց քննութեան Եւրոպայի ո եւ է բարձրագոյն վարժարանն յաճախել՝ ուսմունքը շարունակելու համար (ինչպէս ունինք աշակերտներ Վիեննա , Զուրիցերիա եւ Գաղղիոյ քանի մը քաղաքները) եւ կամ կրնան վաճառականութեան ձեռնամուրի ըլլալ : Աւանդուած լեզուներն են՝ Հայ . Տճկ . Գաղղ . Գերմ . եւ Անգլ . (վերջին տարին) : Գաղղիերէն լեզուն գործնականապէս սորվելու համար՝ աշակերտները պարտաւորեալ են միշտ նոյն լեզուն խօսելու եւ իրենց վրայ պիտի հակեն երեք գաղղիացի Մարիսցներ , գործնք յատկապէս բերել տուաւ վարչութիւնն Բարիզէն : Այս տարի չորս պիտի ըլլայ ասոնց թիւը : Նոյնպէս գերմաներէնի համար հին ուսուցիչներէն զատ , ՆՈՐ մըն ալ բերել կուտայ այս տարի վարչութիւնն՝ Պերլինէն : Ամէն ամիս ծնողաց կը զրկուի համեմատական ամսացուցակ մը , որուն մէջ

մանրամասն կը նշմարուի աշակերտին բար. յական եւ ուսուցչական վիճակը , իւրաքանչիւր դասերու մէջ առած նիշերը եւն . : Վարժարանս կը գտնուի ընդարձակ ծառայից պատէպի մը մէջ . ունի իր յատուկ թփչկն եւ իր դեղարանը : 1902-1903 դպրոցական տարին պիտի սկսի Սեպտեմբեր 2/15 Բշ . որը Դպրոցամուտի քննութիւնները պիտի կատարուին Օգոստ . ամսոյն 30ին եւ 31ին , իսկ դասերը կը սկսին կանոնաւորապէս Գշ . որը Սեպտ . 3ին : Հրատարակուած է վարժարանի 4րդ տեղեկագիրը , եւ աշակերտք կրնան առնուլ զայն ամէն օր մինչեւ կէս օր : Վարժարանիս նկատմամբ ընդարձակագոյն տեղեկութիւններ ուզողը , թող խնդրէ վարժարանի վարչութիւնէն՝ վարժարանիս ծրագիրը , եւ կամ զիմէ հետեւեալ հասցէին՝

Հ. Գաբրիէլ Վ. Մէնէվիչեան

Կ. Պոլիս, Բանկաթի

P. Gabriel Dr. Ménévichian

Constantinople, Pancaldi

ՌՈՊԵՐԴ ԲՈԼԷՃ

Վարժարանիս յառաջիկայ տարեկան պիտի սկսի Երկուշաբթի Սեպտ . 2/15 : Գաղղերութիւններ եղած են նոր դիւրութիւններ տալու վաճառականական ուսմանց համար : Մնայուն թփչկ մը՝ աշակերտաց առողջութեան , մարմնամարզներուն ու խաղերուն , ինչպէս նաեւ վարժարանին ընդհանր առողջապահական վիճակին վրայ պիտի ձեկն Այս տարի կը բացուի նաեւ փոքր տղայ տակաղեղ նոր շէնքը , մասնաւոր հակառակութեան տակ , ուր կարելի պիտի ըլլայ այրուհետեւ մինչեւ տասը տարեկան աշակերտներ ընդունիլ :



ՌՈՍԻԱ — ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

Ընկերութեան դրամագլուխը , ամբողջապէս վճարուած	10,667,667 Փրանք
1901 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիներն ու տոկոս	54.000 000 »
Երաշխաւորութեան գումար	122 000 000 »
Ապահովագրեալներուն վճարուած գումար	249.400.000 »

Կեդրոնացեղի , Ղալաթիոյ քաղաքին վրայ , Մաքսուան հին տեղը

Ընդհ. Դեմի
Ա. ՀԻԻՐՄԻԻՋ

Ընդհ. Գործակալ
ԹԷՈՅՈՐ ՌԷԲԵԼԷ

